# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 405 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 675-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Մայֆորեսթ. ԷյԷմ» բնապահպանական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02699418) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի «Մայֆորեսթ. ԷյԷմ» բնապահպանական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Անտառապատում և անտառվերականգնում Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերում» ծրագրի մասին» N 675-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Թամարա Խառատյան Վանիկի ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 80462322) 2026 թվականի հունիսի 1-ին կնքված N ԻՄԱՆՏԱՌ-ՄԱԱՊՁԲ-2026/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պաշտպանիչ ակնոցների, յուղի, խոտհնձիչ մեքենաների և խոտհնձիչ մեքենայի մասերի ձեռքբերում՝ 599,580 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Թամարա Խառատյան Վանիկի ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 80462322) 2026 թվականի հունիսի 1-ին կնքված N ԻՄԱՆՏԱՌ-ՄԱԱՊՁԲ-2026/2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անձրևանոցի և թորխի ձեռքբերում՝ 349,630 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

07.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ